

Տաղէս ձեռագիր օրինակ ծանօթ չէ ինձ. ունինք առաջին 1—8 եւ 13—16 տողերու համար երկրորդ օրինակ Սարգիս Կաֆայեցւոյ «Հողովդ սուրբ ես եւ ամբիծ» տաղին վերջը, հրատարակուած նախ Հ. Գ. Ալիշանէ՝ Յուլիկը Հայրենեաց Հայոց, Բ., էջ 512 եւ ապա Հայաստանում, § 359բ: Իսկ տող 61—96 դասած եմ էջմիածնի Թ. 515 ձեռագրին մէջ (թղ. 26 ա, ԺԷ. դար): Յեցած այս օրինակներու վրայ կը փորձենք վերականգնել բնագիրը, իսկ 9—12, 17—60 տողերու մէջ Հ. Ալիշանէ մուծուած կամաւ այլալուծիւնները կ'ուզղենք ենթադրաբար:

Տաղին հեղինակը իր անունը զրոյշմած է վերջին տան մէջ՝ Յովհաննէս Թլիւրանցի:

Լիպարիտի վսեմ, հայրենասէր եւ տիրասէր ողւոյն վառ նկարագիրը, անոր ընտանեաց անդամներու յականէ յանուանէ յիշատակութիւնը, հերոսին նահատակական մահուան սրտաճմլիկ նկարագրութիւնը, Սիսի աւերումը, ընդհանուր ժողովրդական սուգը առթիւ Լիպարտի եւ իր որդւոյն՝ Սիր Յոհանի նահատակութեան, պատկերներ են կտաւի վրայ առնուած թարմ գոյներով, որոնք կ'ենթադրեն ժամանակակից մը եւ ժամանակի զգածումներուն թարգման մը: Այս պատճառաւ ալ յայտնած էի ժամանակ յատալ՝ այն տեսութիւնը թէ տաղիս հեղինակը չէ Սոյ Յովհաննէս Թլիւրանցի կաթողիկոսը (1495—1535), այլ համանուն աւելի հնագոյն մը, թերեւս Յովհաննէս Թլիւրանցի գանձասացը, որուն գանձերը կը տեսնուին արդէն 1370ին եւ յաջորդ տարիներուն զրուած Գանձարաններու մէջ: Այս Գանձասաց Թլիւրանցւոյ պէտք է վերագրել ոչ միայն Լիպարտի գեղեցիկ երգը, այլ եւ յանուն Յովհ. Թլիւրանցւոյ հասած տաղերու ընտիր շարքերը:

ՏԱՂ ՔԱՅԻ ԼԻՊԱՐՏԻՆ

Է Աստուծոյ անունն օրհնած  
որ անբակիրն եւ անվախճան.  
Որ ուժ երես քաջ Լիպարտին  
եւ զօրացոյց զիւր սուրբ ծառայն:

<sup>1</sup> Յաստուծոյ... օրհնեալ S: — 3 որ կտուր ուժ լ. S:

<sup>2</sup> Արեգ ամսագիր, 1923:

Ի սուրբ Սարգիս քաջն ի նրման,  
ի սուրբ Թորոս, ի սուրբ Վարդան,  
Քան ըզՄուշեղ այլ խիտա յաղթող  
քան ըզՏրդատ Հայոց արքայն:

Յորժամ հեծնուր զիւր ձին վազան,  
ի ձեռն առնոյր զրուսմ ճօճան,  
Սասանէր ազգըն թուրքմանաց  
Դողայր ամէն թուրքմանաստան

Պատերազմին չըկայր խափան  
ամէն տարի տանն ու քրոսան.  
Ինքն ըզթուրքմանըն հալածէր  
արիւն հանէր զէտ գետ Ջիհան:

Ձերթ քացխով տիկ չարեօք լըցան.  
ժողովք առին 'ւ ի Սիս էկան,  
Մանչակ անուն չարեաց մտան,  
մօտ ի քաղաքն եկան հասան:

Վաթսուն հազար մարդ միարան,  
զըրէհն հազան 'ւ ի ձին հեծան,  
Ձեռուին առին զրուսմը ճօճան,  
թուր եւ սուպար, ու կանգնեցան:

Վաթսուն հազար թուրքմանք եկան  
Չայն ձրղեցին ու կատղեցան.  
Հարին ըզփող պատերազմին,  
զրուկն ու զնաֆիրն ըզգաւհարկան:

Այն անօրէն չար կենդանիքն  
որ են նօքա թուրքմանական,  
եւ ի յահէն քաջ Լիպարտին  
զինչ զուս. զողան, առաջ չիզան:

Յայնժամ ասէ սուրբ թագաւորն.  
«Քաջ Լիպարիտ, մեծ զօրական,  
Հեծելըս քեզ համար եկան.  
մինչ յայս տեղիս ուր կանգնեցան:

Վաթսուն հազար մարդ կտորեցիր.  
ու զՄանչակին զոված տղան.  
Ատիր ըզթախտըն Սուլթանայ  
բերիր ձիանն ու շատ թուրքման»:

5 զերթ սուրբ S քաջին նրման J: — 7 ըզ  
Մուշեղն յաղթող եղեալ S: — 9—12 չունի J:  
11 օտրանց? S: — 12 օտարաստան S: — 13 պատ  
րազմիկ եկիր հափայն (?) J: — 14 ամեն J ու լ  
— 15 մինն S: ըզթուրքմանըն S ըզթուրքման J: — 16  
զեաներ J. հոս կ'ընդհատի J: իսկ S կը նշանակ  
րազմակտեր, յայտնի չէ թէ ձեռագիրը պակասու  
է թէ հրատարակելը տողեր զուրս թողուցած  
— 18 'ւ] ու S: — 22 'ւ] ու S: — 23 զրուսմ  
— 25 օտրանց S: — 30 օտարական S: — 38  
որ S: — 39 թուրքմանց (?) S:

Քաղցրիկ ետուր պատասխանի,  
թէ «Ես քաղքիս չարին փոխան.  
Բայց չէ պատեհ զրուց առնել  
թէպէտ հասաւ ինձ օր մահուան»:

Էջ եւ թամբեաց զիւր ձին վազան.  
հազաւ զրէհ 'ւ ի վրայ ճօճան,  
ի զլուխ եղիր յաղթող վահան.  
ի ձեռն էտ զրուսմը ճօճան:

Երկըրպագեաց սուրբ աթոռոյն,  
եւ ծուներ եղիր ամէն խորան.  
Փառաւորեաց զերրորդութիւն  
զովեաց զիշխանսըն միարան:

Հատչեաց, զորդեակըն համբուրեաց  
հանց որ զհեծելն ի լաց եհան:  
Ասաց. «Որդեակ իմ Յովհաննէս,  
Վասիլ եզրայր իմ սիրական:

Փառօք տիկին զու Մանանայ,  
իշխանուէի արեւելման.  
Հայեաց պատկերս ի մանկութեան,  
որ տի մանուս ի հող տապան»:

Քաջ Լիպարիտ ասաց ցարքայն.  
«Հայոց արքայ ազնուական  
Հաստատ 'ւ ամուր պահէ զկարմունճն.  
որ ես մանուս ի մէջն ու դամ»:

Յիշեաց զՔրիստոս ահեղաձայն,  
կտրեց 'ւ անցաւ առիւծ նրման.  
Չհեծելն արար փախրտտական  
'ւ ի հետ եղիր ընծանրման

Լաչկարն արար զիզան զիզան  
հանց որ արիւն գետեր եկան:  
Նա թագաւորըն չարացաւ,  
զհեծելն առաւ ու հա՞ դարձաւ.

Թուրքաց հեծելն առաջ եկան,  
զկարմունճն առին ու կանկնեցան:  
Երբ Լիպարիտն ի յետ դարձաւ,  
նա չար հեծելն ի դէմ եկան:

Ըսուսմը զըրին ամէն զիհացն,  
չատ խոցեցին զյաղթող վրկայն.  
Հայէր ողորմ յաջ եւ ի ձախ  
զոչ ոք զտաւ իւր օգնական:

46 ի վերայ S: — 47 անխմաստ է «վահան»,  
պէտք է ենթադրել «օտարաւոր»:  
— 48 զրուսմ S:  
— 61 հոս կը սխալ էջմ. 515. Լիպարիտն... ար-  
քայն E: — 62 թագաւոր S: — 63 ու S—չունի E—  
զե կ. E: — 66 կտորեաց վանցաւ E: — 68 հետն  
երթայր: — 69 լաչկն արաւ S: — 72 առին... դար-  
ձան S «ու» չունին SE: — 74 զկարմունճն E: —  
77 զիմաց S: — 78 զաղթող E: — 78 աջ E: —  
79 չե դաւաւ E:

Գաղանաղէմ անօրէնին  
սրբոյն արեան ծարաւէին.  
Ձիւր սուրբ մարմինն ի հօն թողին  
զգլուխն առին ի հետ տարին:

Երբ որ հեծելն ի յետ դնաց,  
ապա Սիսցիքն ի դուրս եկան.  
Կըրկին առին 'ւ ի Սիս մրտան.  
քաղքին կրրակ դարկին 'ւ երան:

Շատ դարդասնին աւեր ամին.  
'ւ եկեղեցիքըն զանագան.  
Էրէցկնին գերի տարան  
սարկաւազունքըն միարան:

Ճառագայթեց լոյսն ի վըրան  
ի սուրբ մարմնոյն ի հանգրտտան:  
Քաջ Լիպարիտն ու Սիր Յոհան  
քրիստոնէից համար մեռան:

Յոր տեղ նրատին հաց ու սեղան  
ժողովք բազում եւ շատ իշխան,  
Յիշեն ըզնա սուրբ քահանայքն,  
Տէր ողորմի ասեն նրմա.

Խէվ Յովհաննէս Թուրքմանցին  
կարճ եւ ողորմ ասաց զայս բանս.  
Դուք յիշեցէք զինքն հանապաղ,  
Յառակ ասէք ի մի բերան:

Հ. Ն. ԱԿՆԵԱՆ



ԽՈՅԹ-ԲՈՒՆԱՅԻՆ ԳԵՒԵՌՆԵՐԸ  
ՈՒՂԵՒՈՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1.

Մեր գասական պատմագրութեան մէջ  
զբեթէ եղական է Արծրունեաց Արքայատոհմի  
պատմիչ Թովմա վարդապետի նկարա-  
գրութիւնը՝ Սոյթ-Բոնաչէն գաւառների աշ-  
խարհագրական գիրքի եւ բնակիչների ա-

81 անօրէնին E անօրինին S: — 82 ծարաւէին  
սուրբ օրէնին, ծարաւ էին սուրբ յարեան F: —  
83 մարմին E: — 84 տարան E: — 85 հեծեալքն...  
դնացին S: — 86 'ւ ապա Սրացիքն S: — 87 երան S:  
90 վեկեղեցիքն E յեկեղեցեացն S: — 91 երկցկա-  
նաց S: — 93 լոյս ճ. վրան E: — 94 ի] եւ S չունի  
F: — 95 Յոհան E ուսիր Յոհան S: — 97 ի սե-  
ղան S: — 97—104 չունի E: — 100 Տէր] տան S:  
— 101 Յովանէս S:

պրելու կերպի մասին: Կը գրէ Թովմա (Բ. 7, էջ 120—121).

«Աստանոր սակաւութիւն բացայայտեցից զորպիսութիւն բնակչաց լերինն (Սուլթայ). Թէ զիւրդ կամ ո՞րպիսի ոք են, եւ ո՞րպէս հնարաւորեալ յսպրուստ անձանց վճարեն զկարեւոր պէտս իւրեանց լի աշխատութեամբ եւ սաստիկ տառապանօք. եւ բնակութիւն նոցա ի խորածորս եւ ի փայարս լերանց եւ ի պրակս մայրեաց, ի գազաթունս լերանց: Եւ բնակեն առանձին ըստ տունս ազգաց եւ սոցնչափ ի բացեայ են միմեանց՝ մինչ Թէ ոք յարանց զօրաւորաց ի բարձրաբերձ տեղեաց ուժգին խանչիցէ՝ հազիւ Թէ ուրիշ կարիցէ առնուլ զրոմբիւն ձայնին, իրբեւ ի վիմաց ինչ արձագան լինելոյ կարծիս բերելով, եւ կէսքն վրիպեալք ի բնական հայրենի լեզուէն, յաղագս հեռաբնակ լինելոյ եւ անհամարողք միմեանց հանդիպեալք, եւ խօսս միմեանց եղեալ կարկատուն մուրացածի բանիւք: Եւ այնքան խրթնի անձանօթք պատահեն առ միմեանս, մինչեւ թարգմանաց անգամ կարօտանան. եւ զպէտս կերակրոցն վճարեն ի սերմանց ինչ, առաւել ի կորեակ կոչեցեալ սերմանէն, զոր սմանք ի սով ժամանակի հաց անուանեն. եւ զնոյն ոտուկեալ ոտիւք ի միջոցս պրակայն, կամ երկմասնի փայտատովք սերմանեալ. եւ է զգեստ նոցա ստուիս ի ծածկոյթ մերկութեանն, եւ օդ ոտիցն հնարաւորեն զձեւ կաւչկաց, ի մորթոց այծից կազմեալ, եւ միով կերակրով եւ միով հանդերձիւ բաւականանան զամառն եւ զձմեռն. եւ են ստացեալ զէնս աշտեայս հաւնազազ կրելով ընդ ինքեանս, ի պատրաստութիւն զազանացն որք ի լերինն բնակին:

Այլ եւ ի ժամանակս հասելոց Թշնամեաց յերկիրն իւրեանց՝ զան միարան լեռնայինքն յօղնութիւն իշխանացն, զի են տիրաւէրք: Իսկ վասն ձեանն անկայուն զօրութեանն որ այն ինչ յամպոյն ի վայր զեղեալ լինին՝ հնարաւորեալ իւրեանց փայտս իրբեւ զանուրս չուանօք պարունակեալ շուրջ գոտամբք, զիւրաւ ընթանան ի վերայ ձեանն իրբեւ ընդ գամաք Երկիր: Եւ են գազանարարոյք,

1 Դեռ մինչեւ վերջին ժամանակներս սահնակով միայն Սուլթայի եւ Սասունի, այլ եւ Նեփրոս լեռան կողմերին բնակող հայ զիւզացիների միջեւ: Երբ դեռ նոր իջած է ձիւնի թանձր խաւ, երբեմն երկուքէն է: Ինչպէս սրանք լիօրէն կը նկարագրէ Թովմա վրդ. Արժուանքն, մեր զիւզացիները չուանի կտորով ոտքե-

արեւնարբուք, առ ոչինչ համարելով զսպարնունս եղբարց հարազատաց, նա եւ զանձանց եւս. եւ կոչին սոքա մեկնակազէնք սուրհանգակք, բնակեալք ի լերինն որ բաժանէ ընդ Աղձնիս եւ ընդ Տարօն: Եւ յաղագս խրթնի եւ անհետագօտելի խօսիցն եւ բարուցն կոչեն Սուլթ, յորոց անունս եւ լեանն Սուլթ անունն: Եւ զիտեն զՍաղմոսն զհին թարգմանեալն վարդապետացն Հայոց, զոր հաւնապազ ի բերան ունին: Սոքա են գոեակ՝ Ասորոց, որ չուեցին զկնի Ադրամեկեայ եւ Սանասարայ որդոյ Սենեքերիմ արքայի թագաւորի Ասորեստանի եւ Նինուէի, յորոց անուն ինքեանք Սանասայք զինքեանս անուանեն. եւ են հիւրասէրք օտարընկալք, պատուազիրք:»

Եթէ Արժուանի պատմիչը այցելէր միւսնոյն գաւառներ մօտ հազար տարի յետոյ, ինչպէս եւս պատահութիւն ունեցայ այցելելու 1907ին եւ 1910ին. նա պիտի տեսնէ՞ շատ քիչ տարբերութիւն ընդ ժողովրդի ցեղախօսական տիպի, նրա սու կացի եւ զարգացման աստիճանի վերաբերմամբ: Այսուամենայնիւ նա պիտի գտնէր մի արմատական վատթարացում երկրի քաղաքական յարաբերութիւններին: Ժ. դարու առաջին կէսին այդ ամբողջ մարզը կը վայելէր հայ բնատնտեսիկ իշխանների եւ տանուտէրերի ազգային հովանաւորութիւնը: Այն ժամանակ Սուլթ-Բոնաչէն, ինչպէս նաեւ շրջակայ Տարօնի, Աղձնեաց երկրի եւ Վասպուրականի տէրերն էին հզօր ու մարտիկ Արժուանիներ, Ռչտունեաց եւ Բոնուեաց վերջին սեպուհները, Թէ եւ վերջին երկու նախարարութիւններէ երկէջ ճիւղերը գրեթէ փոխած էին իրենց անուններն ու հաւատքը. ինչպէս Ռչտունիք որդեգրած էին Շերեփ = Շէրէփ տոհմանունը եւ տիրացած Բաղէշ քաղաքին՝ պատահարաւ վճարելով տուրք եւ զօրք Արժուանի թագաւորներին եւ ընդունելով անոնց վեհապետութիւնը:

Թովմա վարդապետի հեղինակութենէն ի վեր մեր երկրի վրայէն անցած էին թափառական ու վայրագ ցեղեր, Սէլճուկներէն մինչեւ Մոնղոլներ եւ Թաթարներ, երբեմն երկար ատեն անիշխանութեան մատնելով

րին կը կապէին իրենց իսկ չեան լայնահորս — երբեմն քառակուսի — սահնակներ. եւ կը սահէին զիւզէ գիւղ: Դա նախատիպն է Եւրոպացիների SKI գրասանքին: Եւ Եւրոպական սահնակով ճամբորդած եւ Բաղէշէն մինչեւ Դաւալան:

Երկիրը: Ունինք գրաւոր, ապացոյցներ, որ Սուլթ-Բոնաչէն գաւառները, ինչպէս նաեւ սահնակից Սանասայք հաւաքական անուն կրող գաւառակների խումբը, համեմատաբար քիչ տուժեցին այդ փոթորիկների ընթացքին: Շնորհիւ իրենց անառիկ ու ամուր գիրքերին, եւ լեռնականի վայել մարտականութեան, անոնք պահպանեցին որոշ անկախութիւն տիրող բնապետների հանդէպ՝ յաճախ կիւքելով տեղական համաձայնութիւն գրացի Քիւրա (նախապէս տոհմակից) ցեղերի հետ:

Շատ քիչ ուսումնասիրուած է Հայաստանի վարչական-աշխարհագրական բաժանումների հարցը՝ հայ վեհապետութեան շրջաններին: Բանասիրական որոշ նոյնացումներով կարելի է ընդունիլ որ Հայաստանի վարչական շրջանների բաժանումը ետ կը գնայ մինչեւ Բ. դարուն Ք. Ա. Սալբի մեծ թագաւորների ժամանակը: Առաջին օրերէ ի վեր այդ բաժանումը բոլորովն էր կրի բնական մակերեսի, ջրաբաշխի, կլիմայական պայմանների եւ սոցիալական պայմաններից: Պէտք է ենթադրել որ Արտա-կացողութենէ: Պէտք է ենթադրել որ Արտա-կացման վեհապետները, ապա հայ Արշակունիները նոյնութեամբ որդեգրեցին Սալբի քաղաքական աշխարհագրութեան հիմունքը, եւ Մ. Սորենացիի վերագրուած աշխարհագրութիւնը կը մնայ այդ բաժանման վաւերադիրը:

2.

Սուլթ-Բոնաչէն գաւառները կը պատկանին Տուրքերեան նահանգի Տարօն գաւառին՝ որին կցուած են անմիջականօրէն՝ հարաւէն: Մինչդեռ Սուլթի հովիտին յատկօրէն տեսանելի Մօտկան գաւառը կը պատկանի Աղձնեաց նահանգին՝ ըստ մի մատենագրական աւանդութեան: Սակայն ինձ կը թուի որ Մօտկան գաւառանունի ժողովրդական ձեւը պէտք է նոյնացնել հին-հայկական Մոթոզանք գաւառի հետ, եւ ուրեմն պատկանող Կորձէից նահանգին: Լաւագոյն եղանակը կը լինէր նախ նկարագրել այդ գաւառանունը կը լինէր նախ նկարագրել այդ գաւառանունը ինչպէս ծանօթ են ինձ, եւ ապա անցնել

2 Երբ հրատարակուին իմ այդ ուսումնասիրութիւնները, աներկբայ եւս որ բեւեռազիր արձանագրութեանց իրերացաձորը նոյնացումները քիչ կասկած պիտի թողան անոնց ստուգութեան:

աշխարհագրական բաղադրութիւնների եւ մատենագրական մանրամասնութիւնների:

Բառին լայնագոյն ստուգումով անմատչելի եւ կղզիացած գաւառներ են Սուլթ-Բոնաչէն, Մօտկանը եւ Աղձնեաց ու Կորձէից որոշ լեռնային մասերը, ինչպէս Կորդիք վերին, Կորդիք միջին, Կորդիք ներքին, Այաուանք, Այգաուք եւ այլն: Նախ եւ առաջ, անդնդախոր հովիտներ են անոնք ընդհանրապէս՝ հեռու սովորական ճանապօրհներէ եւ դիւրամատչելի ելքերէ: Անոնցմէ իւրաքանչիւրին գուրհահեռ կայ կարաւանների մի գլխաւոր ուղի, համեմատաբար տափարակ եւ դիւրանցանելի: Ապա կան անապահովութեան ու յարձակումի հնարաւորութիւնները՝ թրքական տիրապետութենէն ի վեր: Այդ ամբողջ շրջանները գրեթէ անխտիր գրաւուած են ուժեղ, անզուսպ եւ ուրեմն աւազակարարոյ Քիւրա աշխրէքներէ, որոնց մասին պիտի տամ տեղեկութիւններ վերջէն: Կարծէ յիշել մի օրինակ այդ աշխրէքների ներշնչած ստուգումին: 1899ի ամռան Բաղէշի կառավարութիւնը կ'որոշէ ամեն զնով Մօտկանի աշխրէքներին գանձել տուրք եւ հաւաքել զօրք: Կուսակալը կ'ուղարկէ մի կատարեալ արշակախումբ բաղկացած 50 կանոնաւոր թիւրք զօրքերէ եւ 150ի չափ հեծեալ ոստիկաններէ հանդերձ իրենց սպանելով եւ գլխաւոր հրամանատարութեամբ ժամատարբրի Գնդապետին (Մերալայ): Արշակախումբը դեռ Մղու (Մօտկանի վարչական կենդրոն) չհասած Քիւրաեր յանկարծակիի կը բերեն թիւրք բանակը, կը սպանեն Գնդապետը՝ 19 ոստիկանների հետ, 7 կանոնաւոր զօրք՝ իրենց յիմնապետի հետ, եւ կը վիրաւորեն 30 ուրիշներ: Թիւրք կառավարութիւնը չկրցաւ սանձել այդ Քիւրաերը: 1902ին Սուլթան Ա. Համիտ շքանշաններով պատուեց այդ Քիւրա սպանամբներին՝ իրբեւ լաւագոյն միջոց հաշտութեան: Քրդական այդ յարձակումը թիւրք կանոնաւոր բանակին վրայ գործած էր իսկական սոսկում բովանդակ կուսակալութեան մինչեւ շրջակայքը: Տարիներ յետոյ երբ Բաղէշ դացի, դեռ ամենի շրթունքի վրայ էր այդ արեւոտ յարձակումը: Թիւրք պաշտօնեաներ չէին համարձակեր Մօտկան մտնել:

Ընդհակառակն այդ Քիւրաերը, ինչպէս նաեւ թիւրքիոյ բոլոր Մուսուլմանները ունէին առանձին պատկառանք — հաւանաբար

երկրւոյ — առ Եւրոպացի հիւպատոսները: Այդ հանգամանքին պարտական եմ այցելութիւններս այդ գաւառները. եւ ուրեմն՝ ներկայ գրութիւնը: Խոյթ-Բոննաչէն գաւառները այցելած եմ երկու անգամ: Նախ՝ 1907ի Սեպտեմբերին՝ ուղեկցութեամբ Դիարբէքիւրի Անգլ. հիւպատոսին: Այն ժամանակ գրեթէ պատանի էի եւ թարգման Բաղէչի Անգլ. հիւպատոսարանին:

Երկրորդ 1910ի Սեպտեմբերին, առանձին, երբ արդէն ինքնիշխան հիւպատոս էի: Երկու առիթներն էլ պաշտօնական էին, կը ճամբորդէի Պոլսոյ Դեսպանի արտօնութեամբ՝ ուսումնասիրելու երկրի պայմաններն եւ Բրդական շարժումը: Հետեւեալ նկարագրութիւնը միացեալ արդիւնքն է այդ երկու ուղեւորութիւններին, եւ տեղացիներէ հաւաքած գրոյցներին եւ տեղեկութեան: Օրէ օր կը պահէի օրագրութիւն, որոնցմէ այժմ ձեռքիս տակ սենիմ մօտ 1500 էջեր:

3.

Նախ եւ առաջ պէտք է ուրուագծել Բաղէչ քաղաքի գիւրքն՝ աւելի յտակօրէն երեւան բերելու համար Խոյթ-Բոննաչէնի յարաբերութիւնները շրջակայքի հետ:

Շայկական բարձրավանդակէն դէպի Միջագետք տանող գլխաւոր ճանապարհը կ'անցնի Բաղէչ քաղաքի վրայով՝ վանայ ծովու Արեւմտեան ափէն մօտ 25 քիլոմետր Արեւմտեան հարաւ. քաղաքը կը կազմէ նաեւ հանդոյցը մի շարք ճանապարհների՝ դէպի Վան, Մուշ, Կարին, Սղերդ, Դիարբէքիւր, Մօսուլ, եւ Խիզանի վրայով դէպի պարսկ. Ատրպատական: Քաղաքը երկու մասի բաժնող խոր հովտին միջէն՝ կ'անցնի գետակը, այսպէս կոչուած Բիտլիս-Չոյ, որ սկիզբ կ'անէ քաղաքէն երկու ժամ դէպի հիւսիս-արեւելք գտնուող Խալսիլի գիւղի բլուրիններէն: Սա Արեւելեան Տիգրիսի ակնաղբիւրներէն մէկն է: Այս գետակը կը հոսի Բաղէչ քաղաքը երկու մասի բաժնող խորխորատի միջով, գլխաւորով կ'անցնի քաղաքէն հարաւ-արեւելք գտնուող «Արար» կամուրջով եւ կը հոսի դէպի Սալնայ ձորի հովտը (այն անուանակոչութեան մասին՝ վերջէն): Դարձեալ դէպի հարաւ-արեւելք մի ժամ հեռու հայաբնակ Բարխանդ գիւղէն մի քիչ վարասար կը միանայ նոյնանուն վտակը, որմէ անմիջապէս յետոյ Բիտլիս-Չոյը կը մտնէ

Աղձնեաց երկրի ժայռաշխարհը՝ հարաւարեւմտեան ուղղութեամբ: Քաղաքէն մօտ 4 ժամ դէպի հարաւ Դուխան գիւղէն եւ խանէն մի քիչ վար այս գետը իր մէջ կ'ընդունի այդպէս կոչեալ Մօտկի-Սու, որ իր կարգին յաղկացած է Մօտկանի, Խոյթի եւ Առաջաւոր Սասունի գանազան վտակներէն եւ առուակներէն: Դուխանէն վար Բիտլիս-Չոյը արդէն մի պատկանելի գետ է, եւ կ'ոտոզէ բուն Աղձնիքի նահանգը՝ միանգամայն ընդունելով բազմաթիւ անանուն եւ տեղական վտակները: Սոյն գետը Սղերդէն մի 8 քիլոմետր հարաւ-արեւմուտք կը միանայ այսպէս կոչուած Քէսէր-Սուին, եւ ապա հոսելով ուղղակի դէպի հարաւ՝ մօտ 35 քիլոմետր հեռուարեւելեան վրայ կը միանայ ջրառատ Բօհտան գետին, որ իր կարգին Թիւլօի առջեւ կը միանայ Դիարբէքիւրէն հոսող Արեւմտեան Տիգրիսին եւ այդ կերպով կ'աննէ Տիգրիս անունը:

Նկատողութեան արժանի մի կէտ եւս սա է որ Խոյթէն եւ Մօտկանէն ուղղակի դէպի Արեւմուտք ծաւալով Սասունի հովտներէն հոսող Խուլբի, Բաամանի, Խարդունի եւ այլն գետերը կ'ընթանան դէպի Արեւմտեան (Դիարբէքիւրի) Տիգրիսը: Զբարաշխական այս առանձնայատկութիւնը կը պայմանաւորեն նաեւ երկրի լեռնագրութիւնը, եւ ուրեմն իր լայն գծերի մէջ՝ անոր վարչական-քաղաքական բաժանումը:

4.

Խոյթ-Բոննաչէն գաւառները եւ շրջակայ մարզի աշխարհագրական գլխաւոր գիծերը՝ նկարագրելու լուազոյն եղանակն է ներկայացնել հետեւեալ օրագրութիւնը, որի վրայ աւելցուցած իմ 1907ի արագ այցելութեան ընթացքին քաղաքս ծանօթութիւններն ու նկատողութիւնները: Փորձառութիւնը ինձ սորվեցուցած էր որոշ գաւառների մէջ ճամբորդել ջորիով քան թէ ձիով: Կան այնպիսի սեպ սարեր, ուր ջորին միակ ապահով միջոցն է ուղեւորութեան, թէեւ ձիեր կը հետեւէին:

1910ին, Սեպտ. 12, Բչ. առաւօտը ժամ 8 կէսին մեկնեցայ Բաղէչէն: Իջայ գետի հովտը եւ շուկայի միջով բարձրացայ քաղաքի հիւսիսը: Հին ամրոցի աւերակները ստորոտով ընթացայ ուղղակի դէպի Արեւմուտք: Անցայ պատմական Ամրգօլ վանքի

առջեւէն եւ բռնեցի Չէլտան վայրագ Քիւրացի թաղի ճանապարհը, որ եզերուած է ինչպէս քաղաքի միւս թաղերը, պողատու պարտէզներով եւ կաղամախի ու բարբի ծառերով:

Ժամ 10ին, մէկուկէս ժամէն հասայ Քարնիկի գլուխը, մի գեղեցիկ սարահարթ որ կը հայի Բիտլիս-Չոյի գեղածիծաղ հովտին: Պայծաս արեւի եւ ջինջ երկնքի տակ, հեռուն դէպի հիւսիս-արեւելք կ'երեւէին Սիւփանի եւ Նիմրուարի կատարները: Իսկ ուղղակի դէպի հիւսիս կը բարձրանան այն ցած եւ մացառապատ բլուրները որոնք Խոյթ-Բոննաչէն գաւառները կը բաժնեն Տարօնի դաշտէն, եւ արեւելքէն-արեւմուտք կ'երկարաձգուին մինչեւ Սասունի Անդոկ կատարը:

Քարնիկի գլխէն սկսեալ մտայ հովտը, սկիզբները բաւական լայն ու տափարակ, ապա հեռոհեռէ կը նեղնայ ու կը վերածուի ժայռոտ մի կածանի: Քաղաքէն դուրս գալէս ի վեր տակաւ առ տակաւ, բայց հազիւ զգալիօրէն բարձրացած էի մօտ 1700 մէտր մակարդակին, Բաղէչի մակարդակը հաշուելով 1550 մետր:

Ժամ 12ին, 2 ժամէն հասայ անտառապատ բլուրի գառիթափին գետեղուած մի գիւղ, Գարնի, 4 տուն հայ եւ երեք տուն Քիւրացի բնակչութեամբ: Իջայ գիւղի գլուխը աղբիւրին վրայ մի քիչ ճաշելու: Գիւղացիների մեծ մասը քաղաք մեկնած էր փայտ ծախելու: Այս գիւղը չունի ուրիշ նշանակելի գիծ. մի հայ մամիկ եկաւ գանդատելու որ մի քանի օր առաջ եղեկցի Քիւրացի Փարսօ Աղան մարդ ուղարկած էր գիւղը պահանջելու 4 ոսկի:

Ժամ 1ին մեկնեցայ Գարնիէն, մի քաղաքէն դարձայ դէպի Արեւմտեան հիւսիս եւ ինքզինքս գտայ մի խիտ անտառի մուտքին: Այստեղ կը ճիւղաւորի ճանապարհը դէպի Մօտկանի գաւառը ձախ թելին վրայ՝ հարաւ-արեւմտեան ուղղութեամբ. իսկ աջ թելին բլուրի ուրուագիծը կորած է թաւ մացառուների մէջ՝ իմ հիւսիսային հորիզոնին սփռելով միապաղաղ կանաչութիւն: Անտառի կէսին սկսեց մի նեղ եւ վտանգաւոր արահետ՝ միակ անցքը յտաջ գնալու համար: Չախ թելին՝ հովտի խորքը կը հոսի Խոյթի առուակը: Ստիպուեցայ ջորիէն անգամ իջնել եւ քալել այս նեղ եւ ոլոր-մոլոր

արահետին վրայ: Ժամ 2ին հասայ Խիւրիկ գիւղը, 50 տուն դուս Քիւրացի, ամէնքն ալ Ռայա եւ անդադար ենթակայ Մօտկանցի Քիւրացի կողպուեալներին: Տեսած չէի աւելի թշուառ եւ ահարկած մարդկանց մի հաւաքածոյ քան այս Քիւրուերը: Գիւղը տարտղնուած է մացառու գառիթափին կէս ժամ տարածութեան վրայ: Կը համարձակին միմիայն ցերեկներ դուրս գալ իրենց տներէն: Մշակած են գառիթափին վրայ հարաւոր իւրաքանչիւր թիւ հող, ճիշդ ինչպէս Դարբուրիկի եւ Սասունի նմանօրինակ հովտների մէջ: Արտերի մէջ կորեկի հունձքը ունի մարդահասակ բարձրութիւն. Գրըզլի հողաչերտեր կը տեսնուին աստ անդ: Այս բարձրագաւառների մէջ հունձքերը կը հասունանան Սեպտեմբերի վերջերը եւ երբեմն աւելի ուշ: Յաճախ կը պատահի որ վերահաս ցուրտը կամ ձիւնը կը փճացնէ հունձքերի մի մասը: Ժամ 2-10ին մեկնեցայ Խիւրիկէ: Ծանապարհը կ'ընթանայ չլթայի վայրահակ կողքէն, իրերայաջորդ ժայռուաների միջով. ձախ թելիս՝ դէպի հարաւ կը բարձրանայ Մօտկանի գաւառը Բիտլիսէն բաժանող Մերկա-Քէօսա լեռը, հաւանաբար 300 մետր բարձր մացառուտ մի կատար: Այդ լեռան ստորոտը կը գտնուի Գնձու հայ գիւղը, 30 տուն դուս հայ բնակչութեամբ, սակայն կը համրէ 400 անձ: Գիւղացիք բաւական բարեկեցիկ են, որովհետեւ հայ տղամարդիկ կը միանան Մօտկանի Քիւրացի աւարառութեանց: Այդ գիւղը այցելելու համար պէտք էր իջնել հովտի խորխորատը եւ անցնել հանդիպակաց բլուրը, ինչ որ ինձմէ պիտի առնէր աննուազն երկու ժամ: Ժամ 3ին անցայ Քարաբոյ հայ գիւղի տակէն: Գիւղը բաժանուած է երկու թաղի, իւրաքանչիւր 20ական ընտանիք, բայց բազմանգամ նահապետական բարքերով: Գիւղին վերեւ կը բարձրանայ լերկ եւ ամբհի մի ապառաժ, զոր հայ գիւղացիք կ'անուանեն Գիւլակ. ժամ 3 1/2 հասայ

Մամբու, Քիւրացի գիւղ, 15 տունէ բաղկացեալ, ճիշտ վերելի Քարաբոյի հայ տուների պէս ցրուած անտառապատ գառիթափին վրայ: Այս Քիւրացի գիւղը ինչպէս հայկ. Գնձու, ինքզինքնին պաշտպանել պիտեն եւ ուրեմն համեմատաբար բարեկեցիկ են. կանայք, եւ մանաւանդ երիտասարդ կանայք գարդարուած են խոշոր եւ կեղծ գրամներով,

